

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԳՐԻԳՈՐՅԱՆ ԽՈՐԵՆ ՀԵՆՐԻԿԻ

**ԼԻԲԱՆԱՆԻ ԱՅՆՃԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀԱՅ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ
ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐԸ**

**Է.00.04 «Ազգագրություն» մասնագիտությամբ
Պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի համար**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Հնագիտության
և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝

պ.գ.թ. Հ. Ա. Խառատյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

պ.գ.դ. Հ. Մ. Չոլաքյան
պ.գ.թ. Լ. Ա. Տանաջյան

Առաջատար կազմակերպություն՝

Հայոց ցեղասպանության
թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2025 թ. փետրվարի 18-ին, ժամը՝
14:00, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտում
գործող ԲԿԳԿ 007 «Հնագիտություն և ազգագրություն» մասնա-
գիտական խորհրդում (հասցե՝ Երևան-0025, Չարենցի 15):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ Հնագիտու-
թյան և ազգագրության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2025 թ. հունվարի 15-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝



պ.գ.թ. Ա. Է. Հարությունյան

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Ինքնության լոկալ առանձնահատկությունները, հատկապես վառ կերպով նկատելի են հայկական սփյուռքի առանձին խմբերում, որտեղ դրանք «հայ» էթնանվան հետ միասին ընդգծում/ցուցադրում են կամ նրանց տեղորոշումը (պարսկահայ, լեհահայ, լիբանանահայ, եգիպտահայ, ֆրանսահայ...), կամ նրանց/նրանց նախնիների աշխարհագրական «ծագումը» հայրենիքից (կիլիկահայեր, վանեցիներ, սասունցիներ, այնթափցիներ...), կամ նրանց/նրանց նախնիների պատմամշակութային անցյալի կապերն ու բնութագիրը (չերքեզահայ, դրիմահայ, թաթ հայ) և այլն: Թվում է, որ այդ ինքնություններն արտահայտող բառերն իրենք բնականորեն ներկայացնում են իրենց՝ խմբի ներկայի կամ անցյալի որոշակի ընդհանրություն ընդգծող, բացատրող, ճանաչելի դարձնող իմաստը: Սակայն դրանից զատ և դրան զուգահեռ, ինչպես ցույց են տալիս վերլուծությունները, այդ բառ-անվանումներն իրենք հաճախ պատմություն ունեն, որն ուսումնասիրելու միջոցով կարելի է հասկանալ լոկալ ինքնությունների ձևավորման խնդիրներում դրանց առաջացման նախադրյալները, պայմանները, բովանդակությունը, դեր ունեցող գործոնները, օրինաչափությունները, առանձնահատուկությունները և այդ տերմին-բառերի խորքային իմաստները:

Սույնատենախոսական աշխատանքի արդականությունը պայմանավորված է ի թիվս այլ հայկական խմբային ինքնությունների ձևավորումների քննության փորձերի, Լիբանանի Այնճար գյուղի հայ բնակչության պատմական և ընթացիկ լոկալ ինքնության զարգացումների, փոխակերպումների և դրանց եզրութաբանական ձևակերպումների վերլուծության բացակայությամբ: Ատենախոսությունում քննարկվող թեմայի մասնավոր ուսումնասիրությունը հնարավորություն կտա հասկանալ Այնճարի բնակչության անցյալի ընդհանրության մասին գիտելիքի և ինքնության վրա դրա ազդեցության, գաղթի, նոր վայրում հաստատման, քաղաքական և սոցիալական առաջնորդների՝ խմբի ինքնության կառուցման գործընթացում ներդրված ջանքերի և առհասարակ խմբի ինքնության էվոլյուցիոն և կառուցաբանական (կոնստրուկցիոնիստական) ջանքերի արդյունքները:

Հետազոտության նպատակն ու խնդիրները: Ատենախոսական աշխատանքի հիմնական նպատակն է ազգագրական քննության միջոցով պարզել Լիբանանի Այնճար գյուղի հայ բնակչության ինքնության ձևափոխումները:

Այս նպատակի իրականացումը ենթադրում է հետևյալ խնդիրների քննությունը.

- «Սվեդիացի» և «Մուսալեոցի» խմբի անվանման առաջացման և փոխակերպման պատճառները
- Մուսալեոցիների ինքնության և «ծագման» նարրատիվ-պատում-առասպելների զարգացումներն ինչպես գրավոր այնպես էլ բանավոր աղբյուրների համադրման միջոցով
- Մուսալեոնան ինքնապաշտպանական մարտերի ընթացքը, դրա պատմականացման և առասպելացման համատեքստը
- Այնճարում մուսալեոցների հաստատվելու փորձերը և Այնճարի մուսալեոցիացումը:

Աշխատանքի գիտական նորույթը և գործնական նշանակու-թյունը: Սույն աշխատանքի գիտական նորույթը կայանում է նրանում, որ առաջին անգամ հայկական սփյուռքի մի խումբ՝ մուսալեոցիները, ուսումնասիրվել են մեթոդաբանության լայն կիրառմամբ, որով ցույց է տրվել տվյալ խմբի ինքնանվանման առաջացումը, ինքնության փո-խակերպումների ամբողջ զարգացման ընթացքը Հայոց մեծ Եղեռնից մինչ մեր օրերը՝ հաշվի առնելով սոցիալ-տնտեսական, մշակութային և աշխարհաքաղաքական տատանումները:

Աշխատանքի տեսական նշանակության հիմքում ժամանակա-կից սփյուռքում ինքնության և էթնոմշակութային բնութագրիչները նկարագրող փաստական նյութն է մի խմբի մասին, որը կարող է հենք դառնալ հետագա հետազոտությունների համար:

Աշխատանքի գործնական նշանակությունը կարևորվում է նե-րուժի գնահատման տվյալ համայնքի և Հայաստան-սփյուռք փոխհա-րաբերությունների կառուցման, ՀՀ կողմից սփյուռքի տվյալ խմբի ամբողջական ճանաչման, քաղաքականության և ռազմավարության մշակման, ներառման տեսանկյունից:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Նկատի ունե-նալով աշխատանքի ազգագրական ուսումնասիրություն լինելու հան-գամանքը, և այդ համատեքստում առաջադրված նպատակ-խնդիր-ների բնույթը՝ կատարվել է գիտակարգին հատուկ մեթոդաբանության և միջգիտակարգային ուսումնասիրության համադրություն, որոնց հա-մատեղ կիրառում, հնարավորություն է տվել ունենալ համակողմանի ուսումնասիրություն: Պատմահամեմատական մեթոդի կիրառմամբ իրականացված ներգրաված դիտարկումների, բանավոր պատմու-թյունների և հարցազրույցների միջոցով փորձել ենք խորքային պատ-կերացում կազմել տվյալ խմբի սոցիալական հիշողության մեջ դեպ-քերից որոնք են պահպանվել և որոնք մոռացվել:

Ատենախոսության փորձաքննությունը և հրապարակումները: Աշխատանքը քննարկվել է ՀՀ ԳԱԱ ՀԱԻ-ի Մշակութային մարդաբանության բաժնում՝ արժանանալով դրական կարծիքի: Քննարկվող հիմնական դրույթները զեկուցումներով ներկայացվել են հանրապետական և միջազգային գիտաժողովներում: Ատենախոսության որոշ դրույթներ հրատարակվել են գիտական հոդվածներում, հրատարակությունների ցանկը ներկայացված է սեղմագրի վերջում:

Աշխատանքի կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է 183 էջ ընդգրկող տեքստային մասից՝ ներածությունից, երեք գլխից, քսաներեք ենթագլխից, վերջաբանից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից: Հավելվածում ներկայացված են Պորտ Սայիդի գայթակայանի հատակագիծը, լուսանկարներ Այնճար տեղափոխվելու առաջին տարիներից՝ դեռևս վրանային կացարաններից, ինքնապաշտպանական մարտերի հերոսացած անձած լուսանկարներ, Այնճար տեղափոխման առաջին տարիների կառուցված «ֆրանսական տներ»-ի լուսանկարներ, Այնճարի համայնապատկերի և տոնակատարության և հերոսամարտին նվիրված հուշարձանների լուսանկարներ:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հետազոտական աշխատանքի համար տեսական հիմք է հանդիսացել Ռ. Բրուբեքերի էթնիկության, ինքնության, խմբի վերաբերյալ մոտեցումները, որոնք օգնել են հետազոտական աշխատանքի կաղապարային հասկացություններն ընկալելի ներկայացնելուն: Սույն ատենախոսության մեջ անցյալի մասին կամ անցյալի վերաբերյալ հիշողությունների ու դրանց սոցիալական զարգացումների խնդիրներն անկյունաքարային են : Վերջինիս լուծման համար օգտագործվել է Ալ. Ասամանի անցյալի հիշողության վերաբերյալ օրինաչափությունների դիտարկումները: Սրանց հիման վրա հնարավոր է դարձել գիտականորեն հիմնավորել դաշտային աշխատանքների և գրավոր աղբյուրների համեմատական հետազոտության իրականացման ընթացքում մեր կողմից նկատած առասպելական և պատմական իրողության մասին իմացության փոխակերպումներն ու ձևավորումները: Դրանք գրեթե ամբողջությամբ հիմնավորվում են մեր նյութերով և արտահայտված են թեկնածուական ատենախոսության մեջ: Աշխատանքի իրականացման համար առանցքային նշանակություն է ունեցել նաև Ֆ. Բարտի էթնիկ խմբերի ինքնության վերաբերյալ ձևակերպում-

ները, ինչպես նաև սոցիալական և մշակութային տարածքների մասին դիտարկումները:

Էթնիկությունը, ռասան և ազգությունը սոցիալական աշխարհին ընկալելու, մեկնաբանելու միջոց են: Դրանք աշխարհի վերաբերյալ մոտեցումների արտահայտություններ են, որոնք օգնում են տեսնելու, բացատրելու, եզրակացնելու, հիշելու կամ թե մոռանալու այն սոցիալական իրականությունը, որում և ապրում է մարդը կամ խումբը: Դրանց միջոցով կառուցվում են էթնիկական պատումներ, զծվում շրջանակներ, սխեմաներ, որոնք անպայմանորեն հաղորդ են լինում ընթացիկ իրավիճակային ազդանշաններին: Սոցիալական իրականության մասին պատկերացումները ներառում է մարդկանց մեջ մարմնավորված և ներկառուցված ենթադրյալ, որպես տրված նախնական գիտելիքների ինստիտուցիոնալ առօրյաների և պրակտիկաների միաձուլումը, որոնց միջոցով մարդիկ ճանաչում և ընկալում են առարկաները, վայրերը, անձանց, գործողություններն ու իրավիճակները՝ ինչպես էթնիկ, այնպես էլ ռասայական և ազգային գունավորմամբ:

Սույն ատենախոսությունը սկսվում է մուսալեռցիների ինքնանվանման, տեղանվան հետ կապի և տեղանունից առաջացման խնդրից, որն ի սկզբանե հատուկ ինքնաճանաչման ժամանակի և վայրի խնդիր չի առաջադրում, սակայն առաջադրում է խմբի՝ «գլխավոր գործողությամբ» (ինքնապաշտպանական մարտեր) «հանրահռչակվելու» (որպես մուսալեռցի հանդես գալու) իրողությունից առաջ «անհայտ» լինելու թեզը: «Անհայտ լինելը» պետք է ընկալել ոչ թե որպես ինքնագիտակցության բացակայություն, այլ խմբի՝ արտաքին աշխարհին որպես խումբ ներկայացվածության, այս կամ այն մակարդակով հայտնիության, որևէ կադապարով ընկալման բացակայություն: «Մուսալեռցի հայերն» արտաքին էթնիկական և սոցիալական աշխարհին, այդ թվում հայկական էթնիկական աշխարհին ներկայացան որպես որոշակի գործողության նախաձեռնող և մասնակից, և նրանք կամ նրանց ժառանգները միանգամայն գիտակցված այդ «արտաքին աշխարհի» հետ հարաբերությունները կառուցեցին՝ իրենց ճանաչեցնելու սեփական ձևակերպմամբ: Հաշվի առնելով ինքնաներկայացման այն զարգացումը, որի հիմքում մուսալեռցիները դրել էին իրենց ծագման լեգենդի փնտրտուքները կամ անվան/ինքնանվան ու տեղանվան բացատրության փնտրտուքները, տպավորություն է ստեղծում, որ նրանք ժամանակի և տարածքի մեջ գործողությամբ նախկինում արտաքին աշխարհին ներկայանալու հնարավորություն, չեն ունեցել: Մուսալեռցիներն, իհարկե, բացառիկ չեն, «անհայտությունից» սեփա-

կան կաղապարով «հայտնիանալու», աշխարհին ճանաչելի դառնալու գործում:

Այս համատեքստում ենթադրելիորեն պատկերացնենք մեկ այլ ընթացք, եթե մուսալեռցիների խումբն ինքնահոսի մատներ անցյալի հերոսականության մասին իմացություն/հիշողությունը, և չաշխատեր այդ հիշողության և իր կերպարի կաղապարի վրա, ինչպե՞ս կճանաչեր նրան «արտաքին աշխարհը»: Բավական կլինե՞ր Ֆրանց Վերֆելի վեպը նրանց «հերոս մուսալեռցիներ» ճանաչելու, բայց ավելի կարևորը՝ ինքնընկալման համար: Վերջ ի վերջո մուսալեռցիները փրկվել են ֆիզիկապես, բայց թողել են հայրենիքը: Այլ կերպ չէր կարող լինել, մի բուռ մարդիկ չէին կարող ահռելի պետությանը և նրա ահռելի բանակին հաղթել: Մուսալեռցիների ռիսկը, այո, մեծ էր: Բայց ի վերջո փրկությունն իրականացվել է ծովից անսպասելի եկած օգնությամբ: Սակայն 1919-20 թթ. Ջեյթունի, Հաճընի ոչ պակաս հերոսական մարտերը չեն դարձել փրկված զեյթունցիների, հաճընցիների աշխարհի հետ հարաբերություններ կառուցելու խմբային հերոսականության ինքնաներկայացման կաղապար, ինչպես մուսալեռցիների դեպքում է: 1915-20 թթ. ցեղասպանության դեմ ինքնապաշտպանական մարտերում բոլոր հայերն էլ պարտվել են, բայց մուսալեռցիների պարտությունը դիմադրելու հերոսական անցյալ է, որը սնում է նրա ներկայիս սերունդների ինքնությունը, իսկ զեյթունցիների, հաճընցիների ոչ պակաս հերոսական պայքարը միայն անցյալի պատմական դրվագ է: Թվում է՝ այստեղ դեր ունի թե՛ վեպը, թե՛ հերոսականության կերպարի կառուցման վրա համայնքի առաջնորդների աշխատանքը, բայց նաև մուսալեռցիների տևական ժամանակ մեկուսի ապրելը և պարտության հոգեբանության բացակայությունը: Նոյնիսկ 1938 թ. հայրենիքը ստիպված լքելը պարտություն չընկալվեց և չներկայացվեց: Ավելին, այն նույնպես ներկայացվեց որպես տառապանքների հաղթահարման հերոսական հերթական էջ: Արդյունքում Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ երիտասարդ սերնդի (15-35 տ.) մոտ գիտելիքն աղքատիկ է, ներկայացվում են հիմնականում կարևոր իրադարձությունները, պայքարի օրերի քանակը, մարտիորոսներից ոմանց անունները և մարտերի «կազմակերպչի» Մովսես Տեր-Գալուստյանի մասին որոշ կցկտուր տեղեկություններ, բայց մեծ է մուսալեռցու հերոսականության իքնընկալումը: Առավել խորքային գիտելիքը պատկանում է միջին տարիքի և բարձր (40 և ավելի) սերնդին, հիմնականում տղամարդկանց: Այս խմբի մոտ մանրամասն, հաճախ նաև զրքային տեղեկություն և գիտելիք կա Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ: Ավելին, Այնճար

տեղափոխվելու զրկանքների զուգահեռները Մուսա լեռան իրադարձությունների հետ գերազանցապես հենց այս խմբի կողմից է գեներացվում: Այս սերունդը հիմնականում 1940-70-ականների ծնունդն է, որտեղ և ամենից վառ կերպով են արտահայտված ինքնաբնութագրման կաղապարները: Հետո եկել է գործողությունը, որը պիտի բացատրվի, բայց միանգամից «բախվել են» իրենց նախ «անհայտությանը», ապա նաև իրենց ինքնաճանաչողության փաստացի բացակայությանը: Գործողությունն ինքնին առիթ է դարձել ինքնաճանաչողության և ներկայացման ձևի ու բովանդակության փնտրտուքի համար: Ինքնապաշտպանական մարտերը, ստեղծել են միջավայր՝ այս դեպքում մուսալեռցիների ինքնաներկայացման համար, որը, չնայած տարբեր տարիքային խմբերի մոտ տարբեր ընկալումների առկայությանը, շարունակվում է մինչև այսօր: Պատմական դարաշրջանի և հասարակության հիշողության վերացական միասնությունը քայքայվում է, քանի որ տարբեր տարիքային խմբեր ձևավորում են իրենց հիշողությունը՝ կախված սեփական փորձից: Միմյանց հարող և հակադրվող այս տարիքային խմբերը տարբերվում են աշխարհի վերաբերյալ իրենց պատկերացումներով, հետևաբար, նրանց միջև առաջանում են լարվածություն, բախումներ և հակամարտություններ: Յուրաքանչյուր սերունդ զարգացնում է իր վերաբերմունքն անցյալի նկատմամբ՝ թույլ չտալով նախորդ սերնդին պարտադրել այլ տեսակետ: Սոցիալական հիշողության մեջ նման հստակ զգացվող լարվածությունը պայմանավորված է տարբեր սերունդներին բնորոշ արժեքներով և կարիքներով, որոնք որոշակի շրջանակ են սահմանում հիշողությունների համար, սակայն, ունեն վավերականության սահմանափակ ժամկետ:

Հասարակական հիշողության համար, ընդհանրապես ընդունված է առանձնացնել ժամանակի երկու տիպ. պատմական գծային ժամանակը և բնության կամ առասպելի ցիկլային ժամանակը: Այն, ինչը թվում է անվերադարձ՝ անհետանում է մի ժամանակում, և մեծ հավանականությամբ հայտնվում մյուսում: Անվերադարձ ավարտված համարվող պատմական անցյալը հաճախ վերադառնում է թարմացված-վերանայված առասպելների և ծեսերի միջոցով: Պատմության գծային ժամանակի հեռացման հետ մեկտեղ բացվում է ոչ միայն բնության կամ առասպելի ցիկլային ժամանակը, այլև հիշողությունների, կամ կոնկրետ դեպքի հիշողության պարբերականացման ժամանակը: Այն, ինչը հեռանում է գծային ժամանակով ավելի հեռու տարածություն, այնուհետև ընդհանրապես անհետանում է, և կրկին որոշակի ժամանակ հետո արդիականացած վերադառնում:

Տարելիցներով ու ամյակներով կանոնավորվող ոգեկոչումները, տարեդարձերն ու կրկնությունները կարող են դրական արդյունք ունենալ դեպի պատմության բևեռ, կամ դեպի առասպելի բևեռ՝ կախված նրանից, թե անցյալի իրադարձության արդիականացումը տեղի է ունենում ավելի շուտ պատմական հիշողության տեսքով, թե առասպելական պարբերական թարմացման ձևով: Մենք գործ ունենք հիշատակի՞, թե՞ դեպքի թարմացման հետ՝ կախված է նրանից, թե արդյո՞ք ծիսական ոգեկոչումը միտված է անցյալի և ներկայի տարբերությունը հաղթահարելուն, թե՞ ոչ: Խոսքը նույնիսկ կարող է գնալ պատմական իրադարձությունների միջև տարբերությունը հաղթահարելու մասին: Սա այն ձևն էր, որով հուդայականությունը նոր ժամանակների շեմին պատմությունը վերածեց առասպելի: Իրադարձությունը չի դառնում պատմական անցյալի մաս, քանի դեռ չի անցել սակավաթիվ արքետիպերից մեկի տակ, այսինքն՝ հավերժ կրկնվող պատմական. պարադիգմների, ինչպիսիք են «Իսահակի զոհաբերությունը», «Տաճարի կործանումը» կամ «Անվան փառաբանումը» (նահատակություն): Պատարագ, առասպել, ծես՝ դրանք մինչ օրս մնում են կրկնվողության պարադիգմներում, որոնք (կրթության, արխիվների, թանգարանների, ֆիլմերի, գիտական հետազոտությունների ևն հետ մեկտեղ) կարևոր դեր են խաղում ամրապնդելով Հուդոստի հիշողությունը: Երկրորդ և երրորդ գլխում քննարկվող ինքնապաշտպանական մարտերի ընթացքի և Այնճար հաստատվելու տարիների պատումներում մենք նույնպես հանդիպում ենք վերոնշյալ առասպելական կրկնությանը, որոնք մուսալեռցիների հետագա պատմական առանցքներում բանավոր պատմությունների տեքստով շարունակում են կրկնվել: Այստեղ հաճախ ի հայտ են գալիս նաև խորհրդանշանական (symboles) զուգահեռներ, որոնք աղերսներ ունեն հենց Մուսա լեռան հերոսամարտի հետ: Դրանցից կարելի է առանձնացնել Մուսա լեռան հերոսամարտի ժամանակաշրջանի և Այնճար տեղափոխվելու ընթացքի նույն օրերի համընկնումը (երկուսն էլ տեղի են ունեցել հուլիս-սեպտեմբեր ամիսներին), Բասիթում մնալու օրերի քանակը հերոսամարտի «վերֆելյան» ընթացքի օրերի քանակի՝ 40-ի հետ համընկնումը, Բասիթի հեղեղի ժամերին միայն Մուսա լեռան պարերի միջոցով փրկվելու դրվագը, որը հետաքրքիր համեմատական ունի ֆրանսիական նավերի ափ հասնելուց առաջ վերջին մարտի դրվագների հետ և այլն:

Կոնկրետ Այնճարում՝ Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերում հաղթանակը, այդ հաղթանակի մասին լայն շրջանակներում քննարկումները և դրանից բխող ծագման ու ինքնության

փնտրտուքներն իրենց հետքն են թողել նաև Այնճար գաղթելու ընթացքը ներկայացնելու վրա: Խնդիրն այն է, որ ինչպես արդեն նշեցինք, Այնճար տեղափոխվելու պատմությունը բաժանված է գլուխների՝ փուլերի, որոնք նույնիսկ վերնագրված են (այդ վերնագրերը ոչ այլ ինչ են, եթե ոչ՝ մեմորիալ կադապարներ): Տարհանման յուրաքանչյուր իրադարձություն շեշտված է որպես հերոսական դրվագ, որոնք բնակիչները ներկայացնում են որպես կյանքի ու մահվան մարտ, որպես հերթական «Մուսա լեռան ինքնապաշտպանություն», որը հաղթելն իրենց ճակատագիրն է, առաքելությունը, իրենց «խենթության» վկայականն-ու իրենց ինքնության բնութագրիչը:

Այնճարում հաստատվելու ընթացքում «մուսալեռցի» ինքնության այդ բնութագրիչ իրադարձություններից են «Բասիթի 40 օրը», «Առաջին օրերի հիվանդություններն ու դրանք հաղթահարելը», «մուսալեռցի գաղթականների մի մասի Խորհրդային Հայաստան տեղափոխվելը», «պաղեստինցիների հետ բախումը» և այլն: Վերոնշյալ իրադարձությունները, կարծես, Մուսա լեռան հերոսամարտի դյուցազներգության շարունակությունը լինեն՝ արդեն Այնճարում: Այս դիտարկումը հիմնավորվում է հաճախ հենց բանասացների կողմից նույն կարևորության աստիճանի վրա ներկայացմամբ՝ մշտապես համեմատականներ տանելով Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի հետ: Այս կրկնությունն էլ հենց ամրացնում է սույն պատմական դեպքերի առասպելական կադապարը:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

«ՄՈՒՍԱԼԵՌՑԻ» ԵՎ «ՍՎԵԴԻԱՑԻ» ԻՆՔՆԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ,
ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆԵՐԻ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՒ «ԾԱԳՄԱՆ» ՆԱՐՐԱՏԻՎ-
ՊԱՏՈՒՄ-ԱՌԱՍՊԵԼՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Այնճարի հայ բնակչության մուսալեռցիացման առաջին սաղմերը թաքնված են դեռ Անտիոքից՝ Իսկենդերուն-Ալեքսանդրեթից Պորտ Սայիդ ապա 1939 թ. դեպի Բեքքայի դաշտավայրի ճահճուտ տեղափոխվելու տարիներում: Հետաքրքիր է, որ մինչև 1930-ական թթ. տեղի բնակչությանը նույնիսկ մուսալեռցի չեն անվանել և այս անվանումը հետզհետե դարձել է տվյալ բնակչության անվանումն ու ինքնանվանումը 1960-70-ական թթ. ընթացքում: Այն ժամանակ, երբ Մուսա լեռան լանջի վեց հայկական գյուղերի բնակիչներն Այնճարում արդեն լիարժեք հաստատվել էին: Այս մասին առավել մանրամասն խոսվում է առաջին գլխի առաջին ենթագլխում: Այսինքն, մինչև այնճարահայերի մուսալեռցիացումը, Մուսա լեռան լանջի վեց գյուղերի

բնակչությունը դեռ հավաքական մուսալեռցի կոչվելու ճանապարհ են անցել: Ասվածը հավանական է դարձնում, որ Մուսա լեռան հարակից հայկական գյուղերի բնակչությանը «մուսալեռցի» եզրույթով սկսել են զատորոշել հենց ինքնապաշտպանական մարտերի առնչությամբ և դրանից հետո՝ սույն դեպքերի էպիկական զարգացման կամ դրանց մասին տեղեկություններ հաղորդելու շրջանակներում:

Այսպիսով, առաջնային վարկածով սվեդիահայ-մուսալեռցին այդպես է կոչվել ոչ թե նրա համար, որ բնակվում էր Մուսա լեռան փեշերին, այլ՝ 1915 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Մուսա լեռան բարձունքին տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտերի և դրանից հետո՝ գրավոր աղբյուրներում, հիշատակարաններում, մարտերի նկարագրական դրվագներում և հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում՝ «Մուսա լեռան» եզրույթի շուրջ պատմական այս դրվագը որպես հերոսապատում շարադրելու և հերոսներին՝ մասնակիցներին «մուսալեռցիներ» անվանելու շնորհիվ: Այլ կերպ ասած, «մուսալեռցիները» Մուսա լեռան բարձունքին գյուղերի բնակչության ինքնապաշտպանության կազմակերպիչներն ու մասնակիցներն էին, և «մուսալեռցիներ» եզրն ավելի ուշ է դարձել ողջ բնակչության հավաքական անուն, ներառելով նաև տեղահանված և այդ մարտերին չմասնակցած բիթիասցիներին, քերուսիեցիներին:

Առաջին գլխում ներկայացվում է նաև, որ Մուսա լեռ-Սվեդիայի հայերին դեռ բնորոշիչ չէր «Մուսալեռ» եզրույթը որպես տեղանքի ցուցիչ, որից ելնելով, մինչև 1925 թ. գրավոր աղբյուրներում, հատկապես 1915 թ. Հայոց Մեծ Եղեռնի օրերին, տվյալ տարածքի բնակչությունն առավել հայտնի էր՝ Ալեքսանդրեթ-Իսկենդերունի Սելևկիա-Սվեդիայի հայկական գյուղերի բնակչություն:

Կարելի է ասել, որ հետագայում Մուսալեռ-Սվեդիայի մուսալեռցիացման կարևոր ու գլխավոր ուղենիշը դարձավ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը: Չնայած, որ այն տպագրվել էր 1933 թ., սակայն հայ լայն հասարակությանը հասանելի դարձավ ավելի ուշ: Թեև գրքի շուրջ բարձրացված աղմուկին, մուսալեռցի-սվեդիացին, դեռևս չգիտեր ո՛չ այդ գրքի, ո՛չ թուրքական մամուլում այդ գրքի և գրքի հեղինակի դեմ սկսված խիստ ագրեսիվ քննարկումների մասին: Մի կողմից սույն վեպի հանրայնացումը Թուրքիայի համար վտանգավոր էր, քանի որ Հայոց Մեծ Եղեռնի թեման էր հանրայնանում, մյուս կողմից ագրեսիվ հարձակումը շահեկան էր, քանի որ իշխանությունների հարկադրանքով և վախի թելադրանքով սույն քննադատություններին զուգահեռ պոլսահայերը հեղինակի և վեպի դեմ բողոքի արշավներ էին կազմակերպում՝ պաշտպանելով «բարեխնամ

թուրք կառավարությանը»: Սույն գլխում քննարկվող նյութի իմաստով կարևոր է, որ հանրայնանում էին «Մուսա լեռ» եզրույթն ու «մուսալեռցի հայերի» հերոսականությունը, որոնք վերադարձել էին Մուսա լեռ-Սվեդիայի հայրենի տները և փորձում էին վերակենդանացնել ընդհատված կենցաղավարումը՝ անգամ չկասկածելով, որ 20 տարի առաջվա Մուսա լեռան հայերի ինքնապաշտպանական իրադարձություններն աշխարհի համակ ուշադրության կենտրոնում են: Նրանք դրան պիտի ծանոթանային շատ ավելի ուշ, մոտ երեսուն տարի անց, և հենց երեսուն տարի անց էլ նրանք պիտի բոլորովին այլ հայացքով ընկալեին իրենց մասնակցությամբ դեպքերն ու իրենց հավաքականությունը:

Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպն ու դրա թողած արձագանքները գեղարվեստորեն հանրահռչակեցին ոչ միայն տեղի ունեցած պատմական դեպքերը, այլ առավել էպիկական, յուրահատուկ տեղի կարգավիճակ շնորհեցին հենց Մուսա լեռանը. որտեղից էին այդ հայերը և նույնիսկ այդ թուրքերը: Սա չէր կարող հետագայում իր արձագանքը չթողնել տեղի հայերի ինքնանվանման նոր ընկալումների վրա:

1915 թ. ինքնապաշտպանական մարտերից Պորտ Սայիդի գաղթական տեղափոխվելուց հետո է, որ առաջին անգամ հանդիպում ենք գրավոր աղբյուրների, որտեղ հետաքրքրության է արժանանում մուսալեռցիների ծագումը, հայկականությունը, բարբառը և Անտիոքի հարավում հայտնվելը: Հայկական հավաքականության մաս դառնալու, ընդհանուր հայ ներկայանալու համար մուսալեռցի ինտելեկտուալ վերնախավը պետք է այս ամբողջականության մաս ներկայացնեի մուսալեռցուն-սվեդիացուն: Սրանից ելնելով է առաջ եկել մուսալեռցի-սվեդիացիների ծագման տարատեսակ վարկածները: Սա Մուսալեռ-Սվեդիայի հայկական գյուղերի բնակչության մուսալեռցիացման հաջորդ փուլն էր, որ մուսալեռցուց զատ խնդիր կար նաև հայկական հավաքականության մաս ընկալվել:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

**ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ԻՆՔՆԱԿԱՇՊԱՆԱԿԱՆ ՄԱՐՏԵՐ: ՊԱՏՄԱԿԱՆ
ԴԵՊՔԵՐ ԵՎ ԱՌԱՍՊԵԼԱՑՈՒՄ**

Մուսա լեռան բարձունքին տեղի ունեցած ինքնապաշտպանական մարտական գործողությունները, մասամբ նաև ինքնապաշտպանվողների առօրյան, կյանքի կազմակերպումը, մարդկանց ներքին հարաբերությունները և այլն, արտացոլվել են ինչպես գեղարվեստական,

հուշագրական, այնպես էլ պատմական, վերլուծական աշխատություններում: Սակայն դրանցում կան թե՛ տեղեկությունների միտումնավոր ուղղորդումներ, թե՛ տարընթերցումների առիթ տվող ձևակերպումներ, թե՛ շարադրանքի քաղաքական կողմնակալություններ, թե՛, բնականաբար, պատմողի կողմից պատմվող դեպքի մանրամասների՝ որևէ նպատակ չհետապնդող դրվագների սեփական ընտրություններ կամ իրեն հայտնի իրողություններ: Մեզ հետաքրքրող նյութի տեսանկյունից առավել կարևոր են դրանց թողած ազդեցությունը մուսալեռցիների վրա ընդհանրապես, Այնճարի մուսալեռցիների վրա՝ մասնավորապես:

Սույն գլխի քննարկումների համար Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի վերաբերյալ հրատարակված գրականությունից ընտրվել էին՝ ա) առաջնային սկզբնաղբյուրներ, որոնք նախապես ունեցել են մեծամասամբ միմիայն ինքնապաշտպանական մարտերի ընթացքը շարադրելու միտում, և բ) մրցակցող հայկական ավանդական կուսակցությունների՝ ինքնապաշտպանական մարտերի կազմակերպման գործում իրենց դերն առանձնահատուկ ընդգծելու միտում ունեցող աղբյուրներ: Այս աղբյուրներն ավելի ուշ շրջանի հրատարակություններ են և ավելի կենդանի են այսօրվա մուսալեռցիների պատմություններում:

Հանրային շրջանակներում առավել հայտնի է Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը, որը հաճախ ընկալվել և ընկալվում է որպես սկզբնաղբյուր, և փաստացի ամենաազդեցիկն ու ամենակարևորն է թե՛ հանրային իմացությունների, թե՛ մուսալեռցու ինքնության վրա ազդելու նշանակությամբ: Վեպը հրատարակվել է դեռևս 1933 թ., և անմիջապես թարգմանվել բազմաթիվ լեզուներով, բայց տևական ժամանակ հայ հասարակությունից այն քչերին է հայտնի եղել: Այս վեպն առաջինն էր, որ խախտեց Լոզանի կոնֆերանսից հետո Հայոց ցեղասպանության մասին աշխարհում հաստատված լռությունը և անմիջապես առաջացրեց Թուրքիայի Հանրապետության ագրեսիվ արձագանքը: Խորհրդային տարածքում ապրող հայերը վեպի մասին իմացել են միայն 60-ական թթ., երբ այն թարգմանվել էր նաև արևելահայերեն: Սակայն սփյուռքում գիտեին վեպի մասին ոչ միայն արևմտահայերեն թարգմանված լինելու պատճառով, այլև տարբեր երկրներում հանգրվանած հայերն այն կարդում էին իրենց հաստատված երկրների լեզուներով և գրել են վեպի մասին: Առաջիններից մեկը Լևոն-Կարապետ Պալճեանն էր (հետագայում՝ ամենայն հայոց Վազգեն Առաջին կաթողիկոս), որ 1940 թ. Բուխարեստում հրատարակեց «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին

մէջ» գրքույկը, որում ի թիվս այլ կարևոր հարցադրումների՝ ամփոփիչ ներկայացրեց այն, ինչը հետագայում դարձավ յուրաքանչյուր մուսալեոցու հավատամքը. «Վէպին մէջ ապրողները նորմալ մարդիկ են, սովորական հայեր, նոյնիսկ միջակ մարդիկ, որոնք բնականոն պայմաններու մէջ ազգային կեանքին մէջէն աննշմար պիտի անցնէին: ...Եւ սակայն այն հանդարտ, բարեպաշտ, պահպանողական ու համբերատար մարդիկ արտաքնապէս զուրկ բացառիկ հոգեկան կարողութիւններէ, ճակատագրի մէկ ծանր պահուն գիտեն և կրնան ուժգնօրէն ցեղին հանճարը ապացուցանել և արժեցնել զայն առաւելագոյն չափով...»: Այսօրվա Այնճարում ապրող յուրաքանչյուր մուսալեոցի գիտի, որ ինքն անհրաժեշտ դեպքում կարող է և պետք է «ցեղին հանճարը ապացուցանել»: Դա արել են իր նախնիները և դա կանի ինքը: Այս ընկալումը խոր ազդեցություն ունի Այնճարի մուսալեոցու ինքնության վրա: Սակայն այն Այնճարում զուգակցված է «մուսալեոցու տարբերակման» հետ՝ «ցեղին հանճարը ապացուցանել» կարող են գլխավորապէս դաշնակցական մուսալեոցիները: Այս համոզմունքն է պատճառը, որ, օրինակ, ժամանակին «Ազգակ» օրաթերթը գրել է, որ «Մուսա լեռան 40 օրը՝ վէպի Գաբրիել Բագրատյանի կերպարով հեղինակը Մովսես Տեր-Գալուստյանին «կակնարկե»»: Մովսես Տեր-Գալուստյանը Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպիչներից դաշնակցականն էր: Այս համոզմունքն է պատճառը, որ Այնճարի մուսալեոցիները խանդոտ հետևում են Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպիչների անունների հիշատակումներին և զգայական արձագանքում յուրաքանչյուր «շրջանցումի»: Սրա ակնառու օրինակներից է, որ երբ Խորհրդային Հայաստանում հրատարակված Հայոց պատմության դասագրքի Մուսա լեռան ինքնապաշտպանությանը նվիրված դրվագում ինքնապաշտպանական մարմնի անդամներ են ներակայացվում «անվեհեր հայրենասերներ Եսայի Յաղոբյանը, Տիգրան Անդրեասյանը, Պետրոս Տնլաքյանը և ուրիշներ», Այնճարի մուսալեոցին «Մուսա-լեռ տարեգրքի» 1972 թ. համարում անմիջապէս արձագանքում է, կշտամբելով խորհրդահայ պատմագիրներին ինքնապաշտպանության կազմակերպիչների վերաբերյալ քաղաքական ընտրության մեջ և պնդելով, որ ինքնապաշտպանական մարտերի իրական կազմակերպիչը և միակ դերակատարը Մովսես Տեր-Գալուստյանն ու Հայ Յեղափոխական Դաշնակցությունն են: Մի կողմից Դաշնակցության դերը հետևողակաւորեն շրջանցելու խորհրդային քաղաքականությունը, մյուս կողմից՝ Այնճարում իշխող Դաշնակցական կուսակցության աչալուրջ վերահսկողությունը չափազանց սրել են ոչ վաղ անցյալի դեպքերի զարգա-

ցումների գնահատումների հարցը և ազդել դրանց միակողմանիության վրա:

Իրականում Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի ղեկավարի հարցը տարիներ շարունակ եղել է ամենաքննարկվող թեմաներից մեկը: Այս հարցին մուսալեռցիների հուշագրություններում, հրատարակվող աշխատություններում, Խորհրդային Հայաստան տեղափոխված և Լիբանանի Այնճար համայնքի մուսալեռցիները տարբեր պատասխաններ ունեն և այդ տարբերությունն էլ մասամբ «մուսալեռցի» ինքնության ու մուսալեռցու անցյալի պատմության հիշողության բաժանարարն է: Սկզբնական շրջանում ղեկավարի մասին հարցը սահմանափակվում էր անհատներով, բայց հետագայում, գրավոր հուշագրություններում այդ անձինք ներկայացնում էին որպես կուսակցական կամ կրոնական կողմեր: Մովսես Տեր-Գալուստյանը ներկայացնում էր «Հայ Յեղափոխական Դաշնակցություն» կուսակցությունը, Եսայի Յաղոբյանը՝ «Հնչակյան» կուսակցությունը («Վերակազմյալ Հնչակյան» կուսակցություն ապա՝ «Ռամկավար» կուսակցությունը), իսկ վեր. Տիգրան Անդրեասյանը՝ Հայ ավետարանական համայնքը: Սա առաջ է բերել ինքնապաշտպանական մարտերի մասին եռաճյուղ զարգացող պատումների, որի հետևանքով ճյուղերից յուրաքանչյուրի գլխավոր գործող անձը վերոնշյալ երևելիներից մեկն էր: Ինչպես ասվեց, Այնճարի մուսալեռցիների հերոսը Մովսես Տեր-Գալուստյանն է, որն ուղղակի և անուղղակի անուրանալի ներդրում ունի Այնճարի բնակչության «դաշնակցական հերոս մուսալեռցի» ինքնության կառուցման զարգացումներում:

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

**ՄՈՒՍԱԼԵՌՑԻՆ ԱՅՆՃԱՐՈՒՄ: ԱՅՆՃԱՐՈՒՄ ՀԱՍՏԱՏՎԵԼՈՒ
ՏԱՐԻՆԵՐԻ ԱՂԵՐՍՆԵՐԸ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ ՀԵՐՈՍԱՊԱՏՄԱՆ ՀԵՏ՝
ԸՍՏ ՀԱՆԳՐՎԱՆՆԵՐԻ**

Այնճարում հաստատվելու պատմությունը 1939 թ. մինչև 1990-ական թթ. ընդգրկող մի շրջան է, որտեղ սյուժեները սկսվում են մուսալեռցի-այնճարցիներին հանդիպած դժվարություններով և ավարտվում այդ դժվարությունների հաղթահարումով՝ միշտ նույն սյուժեով: Թե՛ Այնճարի կուսակցական գործիչների, թե՛ վարչական պաշտոնյաների և թե՛ պարզապես գյուղացիների հետ հարցազրույցներում մենք ունենք մի պատկեր. երբ գոյություն ունի արդեն իսկ կազմված պատմություն, որը բաժանված է փուլերի և այդ փուլերն էլ որպես «հիշողություն» ներկայացվում են ըստ ժամանակաշրջանի:

Ակնհայտ է, որ «մասնավոր հիշողությունը» ենթարկվել է համակարգված շարադրանքի գիտելիքին: Այս համակարգը՝ գիտելիքը, մշակվել է սոցիալական կշիռ ունեցող խմբի, այս պարագայում՝ դաշնակցության «Կարմիր լեռ» կոմիտեի կողմից, որի ջանքերն, անկասկած, շատ արդյունավետ են եղել: Այդ գիտելիքի ձևավորմանն են ծառայում թե՛ Այնճարի վարչա-տարածքային բաժանումների՝ թաղամասերի անցյալի մասին պատումները, Մուսա լեռան լանջի գյուղերից յուրաքանչյուրի առանձնահատկություններով և դրանց իդեալականացմամբ, թե՛ Այնճարը յուրացնելու միասնական կամքի և գործողությունների հերոսականացման սյուժեները, թե՛ անցյալը ներկային կապելու կրթական ու մշակութային ծրագրերը՝ սկսած դպրոցական կրթությունից մինչև տարածքի պատմական մշակութայնացում՝ հուշարձանեցում, անցյալի դրվագների պարբերական ծիսական անդրադարձ՝ միշտ նույն արարողություններով տոնահանդեսներ, սգահանդեսներ և այլն: Այնճարում մուսալեռցու անցյալն սկսվում է Մուսա լեռան ինքնապաշտպանության կազմակերպմամբ, Պորտ Սայիդում համայնքային կյանքի դժվարությունների հաղթահարմամբ, շարունակվում Ալեքսանդրեթի սանջակը լքելու և Այնճար տեղափոխվելու բարդությունների հաղթահարման հերոսականության հիշողությամբ, Այնճարը բացառապես հայկական պահելու ջանքերի նկարագրությամբ և այդ ամենում «Կարմիր լեռ» կոմիտեի կազմակերպչական անուրանալի գործունեության ընդգծմամբ:

Այնճարի մուսալեռցիները մոռացել են կամ գիտակցված չեն պատմում 1936-38 թթ. դեպքերն Ալեքսանդրեթում, որոնք մասնավոր հերոսականացում չունեն: Չեն պատմում, հնարավոր է գիտակցված շրջանցում են, սակայն գուցե նաև մոռացված են Այնճարի ոչ դաշնակցականների հալածանքների հետ կապված դեպքերը: Չի խոսվում այն մասին, թե ինչու Խորհրդային Հայաստան մեկնողները հիմնականում հնչակյան և ռամկավարներ էին: Չի պատմվում այն մասին, որ «ֆրանսական տներ» էին տալիս միայն նրանց, ովքեր որևէ ձևով շենքերի շինարարության վրա աշխատանքներ էին կատարում և կամ օժանդակող միջոցներ էին տրամադրում (լծկաններ, գրաստներ, բեռնակառքեր և այլն): Բանավոր պատմություն չկա նաև այն մասին, թե ինչու ընտրվեց հենց Այնճարը, քանի որ ընտրության տարբեր տարածքներ կային: Սրանք այն դեպքերն են, որոնք կամ մոռացվել են, կամ «անհարմար» հիշողություն են, կամ խոսելու տաբուացումն իսկապես մոռացրել է երևույթը, դեպքը, խնդիրը: Մյուս կողմից՝ Այնճարում ապրում են որոշ հալածյալների ազգականներ, և նրանց ընտանեկան հիշողությունն, անկասկած, գիտի այդ դրվագները: Սա,

ըստ երևույթին, այն դեպքն է, երբ հանրային, կոլեկտիվ գիտելիքը՝ որպես «հիշողություն» ձևավորող, թույլ չի տալիս մասնավոր հիշողության դրսևորումը՝ վերահսկելով «ճշտի» և «սխալի» շեղումներն իր տեսանկյունից: Այս դեպքում գործ ունենք գիտակցված, սուբյեկտիվ ընտրական հիշողության հետ:

ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սվեդիայում ապրելու շրջանում «մուսալեոցիների» ինքնության մեջ քրիստոնյա լինելու, քրիստոնեական ինքնության առաջնահերթությունը, որն արտահայտվել է նույնիսկ մուսալեոյան հայկական բարբառի «քրիստոնեական» անվան մեջ («քիսթինըկ»), Օսմանյան կայսրության 1915 թ. հայկական ցեղասպանության ծրագրի իրագործման գործողություններում առաջադրել է «հայ» էթնիկության առաջնահերթության հարցը: Մինչ այդ նրանց ապրած միջավայրում, որտեղ ինքնության առաջնային ցուցիչը կրոնական էր՝ ավիականությունը, մահմեդականությունը, տարածքի բնակչության հետ հարաբերություններում վեց հայկական գյուղերի բնակչության համար «քիսթինըկ»՝ քրիստոնյա անունը և ինքնությունը լիովին բավարար էր: 1915 թ. հայերի տարագրման հրամանն առաջնային դարձրեց «քիսթինըկների» «հայ» ինքնությունը: Վերջինս իր հերթին առաջադրեց ընդհանուր հայկականության մեջ «քիսթինըկների»՝ սվեդահայերի պատմական անցյալի և Սվեդիայի տարածքում հայտնվելու հանգամանքների ճշգրտման խնդիրը: Թե՛ «քիսթինըկ»՝ քրիստոնյա, թե՛ «հայ» ընդհանուր ինքնության մեջ «տեղավորվում էին» Մուսա լեռան փեշերի վեց հայկական գյուղերի թե՛ հայ առաքելականները, թե՛ ավետարանականները, թե՛ կաթոլիկները: Վտանգը սպառնում էր նրանց բոլորին՝ որպես էթնիկական հայերի, և նրանք միասին էին քննարկում դիմադրելու կամ տարագրվելու գործողություններին մասնակցելու իրենց հավաքական ջանքերը: Վեց հայկական գյուղերի հայերի մեծ մասը բարձրացան Մուսա անունը կրող լեռը և շուրջ 53 օր դիմադրելով թուրքական կանոնավոր բանակի գրոհներին՝ ի վերջո ծովով տեղափոխվեցին Եգիպտոս՝ Պարտ Սայիդ:

1915 թ. ինքնապաշտպանական մարտերից, Պորտ Սայիդի գաղթակայան տեղափոխվելուց հետո է, որ առաջին անգամ հանդիպում ենք գրավոր աղբյուրների, որտեղ հետաքրքրության են արժանանում «քիսթինըկների»՝ հայ մուսալեոցիների ծագումը, հայկականությունը, բարբառը և Անտիոքի հարավում հայտնվելու վարկածները: Հենց այս շրջանում էլ «հայ» ինքնությունը սկսեց գերակշռել քրիստո-

նեական ինքնության նկատմամբ: Մինչև 1925 թ. գրավոր աղբյուրներում, հատկապես 1915 թվականի Հայոց Մեծ Եղեռնի օրերին, տվյալ տարածքի բնակչությունն առավել հայտնի էր որպես Ալեքսանդրեթ-Իսկենդերունի Սելևկիա-Սվեդիայի հայկական գյուղերի բնակչություն:

Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտությունից, Ալեքսանդրեթի սանջակը Սիրիայի կազմում ֆրանսիական մանդատի տակ անցնելուց հետո, Մուսա լեռան փեշերին ապրած հայերը վերադարձան իրենց բնակավայրեր: Սանջակում ֆրանսիացիների ձևավորած վարչական բաժանումներում 1925 թ. «Մուսա լեռ» անունն առաջին անգամ դառնում է վարչական միավորի անուն: Դա սանջակի շրջաններից մեկն էր, որտեղ ապրում էին այլի թուրքմեններ, արաբներ և քրիստոնյա հայեր: Վարչական միավորի «Մուսա լեռ» անունը ընտրվել էր ընդամենը որպես աշխարհագրական անուն և որևէ կապ չունեի տարածքի բնակչության խմբերից որևէ մեկի ինքնության հետ:

Սանջակը Թուրքիայի Հանրապետությանը հանձնելուց, 1939 թ. Մուսա լեռան փեշերի իրենց բնակավայրերը լքելուց և Լիբանանի Այնճար բնակավայր տեղափոխվելուց հետո, «քրիստոնյա» և «հայ» ինքնությունների կողքին նախ սկսեց ձևավորվել «այնճարցի», ապա, 1960-ականներին սկսվեց «մուսալեռցի» ներքին ինքնության ձևավորումը: Այնճարի հայերը շատ էին տարբերվում Լիբանանում 1915-ից հետո հաստատված հայերից: Այնճարը միակ զուտ հայկական բնակավայրն էր Լիբանանում, այնճարցիներն ավելի ուշ էին եկել Լիբանան, նրանք բարբառը, կենցաղը, պատմական անցյալը ծանոթ չէին լիբանանահայերին, բայց մի բան բոլորը գիտեին՝ Այնճարում այն հայերն էին, որոնք 1915-ին երկու ամիս առանց դրսի օգնության դիմադրել էին թուրքական կանոնավոր բանակին և մեծ հաշվով հաղթական էին դուրս եկել այդ ահեղ հակամարտությունից: Կովի մանրամասները դեռևս հայտնի չէին, բայց արդյունքը հայտնի էր: Այդ շրջանում, թե՛ լիբանանահայերի, թե՛ Այնճարում վերաբնակների համար, նրանք դեռևս պարզապես «այնճարցի» էին:

1960-ականներին է, որ Սվեդիայից Այնճար տեղափոխված հայերին սկսեցին անվանել «մուսալեռցի», և հենց այնճարցիներն իրենք իրենց ինքնությունը սկսեցին կառուցել «մուսալեռցի» գաղափարի շուրջ:

Սվեդիայից Այնճար տեղափոխված հայերը «մուսալեռցի» են անվանվել ոչ թե այն պատճառով, որ մինչ տեղափոխությունը բնակվում էին Մուսա լեռան փեշերին, այլ՝ 1915 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Մուսա լեռան բարձունքին տեղի ունեցած ինքնապաշտ-

պանական մարտերի և դրանից հետո գրավոր աղբյուրներում, հիշատակարաններում, մարտերի նկարագրական դրվագներում և հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում՝ «Մուսա լեռան» եզրույթի շուրջ պատմական այս դրվագը որպես հերոսապատում շարադրելու և հերոսներին՝ մասնակիցներին՝ «մուսալեռցիներ» անվանելու շնորհիվ: Մուսա լեռան հարակից հայկական գյուղերի բնակչությանը «մուսալեռցի» եզրույթով սկսել են գատորոշել հենց ինքնապաշտպանական մարտերի առնչությամբ և դրանից հետո սույն դեպքերի էպիկական զարգացման կամ դրանց մասին տեղեկություններ հաղորդելու շրջանակներում: «Մուսալեռցի-ները» Մուսա լեռան փեշերի հայկական գյուղերի բնակչության՝ լեռան վրա ինքնապաշտպանության կազմակերպիչներն ու մասնակիցներն էին, որոնք ներկայացվում էին որպես ինքնուրույն որոշումներ կայացնելու, դրանք հերոսական գործողությունների վեր ածելու ընդունակ հերոսական կերպարներ և հերոսական հավաքականություն: Այլ կերպ ասած՝ «մուսալեռցին» հերոսականության գաղափար է և «մուսալեռցի» ինքնությունը հենց հերոսականության գաղափարի ինքնությունն է:

«Մուսալեռցի» գաղափարի ձևավորման հիմքում ընկավ ավստրիացի հեղինակ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, նախ՝ որպես օտարի կողմից շարադրված, որով «դրսինը», «օտարը», «ուրիշը» ընդունում է երևույթի հերոսական կողմը՝ դրանով անաչառության իրավունք ներարկելով մուսալեռցիներին, երկրորդ՝ վեպի բարձրացրած հանրային մեծ հետաքրքրությունն ու համակրանքը հայերի նկատմամբ առհասարակ, մուսալեռցիների նկատմամբ՝ մասնավորապես, երրորդ՝ վեպի բարձրացրած հարցերի գնահատումներն այլ հեղինակների կողմից, և վերջապես՝ վեպի դեմ թուրքական ագրեսիվ գործողությունները:

Առաջիններից մեկը, որն այդ տեսանկյունից գնահատել է «Մուսա լեռան քառասուն օրը» վեպը, Լևոն-Կարապետ Պալճեանն էր, (հետագայում՝ ամենայն հայոց Վազգեն Առաջին կաթողիկոս): 1940 թ. նա Բուխարեստում հրատարակեց «Մուսա լեռան հայերը Ֆրանց Վերֆելի վեպին մէջ» գրքույկը, որում ի թիվս այլ կարևոր հարցադրումների, ամփոփիչ ներկայացրեց այն, ինչը հետագայում դարձավ յուրաքանչյուր մուսալեռցու հավատամքը. «Վեպին մէջ ապրողները նորմալ մարդիկ են, սովորական հայեր, նոյնիսկ միջակ մարդիկ, որոնք բնականոն պայմաններու մէջ ազգային կեանքին մէջէն աննշար պիտի անցնէին:... Եւ սակայն այն հանդարտ, բարեպաշտ, պահպանողական ու համբերատար մարդիկ արտաքնապես զուրկ բացառիկ հոգեկան կարողութիւններէ, ճակատագրի մէկ ծանր պահուն գիտեն և

կրնան ուժգնօրէն ցեղին հանճարը ապացուցանել և արժեցնել զայն առաւելագոյն չափով»: Այսօրվա Այնճարում ապրող յուրաքանչյուր մուսալեոցի գիտի, որ ինքն անհրաժեշտ դեպքում կարող է և պետք է «ցեղին հանճարը ապացուցանել»: Դա արել են իր նախնիները և դա կանի ինքը: Այս ընկալումը խոր ազդեցություն ունի Այնճարի մուսալեոցու ինքնութեան վրա: Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպն ու դրա թողած արձագանքները գեղարվեստորեն հանրահռչակեցին ոչ միայն տեղի ունեցած պատմական դեպքերը, այլ առավել էպիկական, յուրահատուկ տեղի կարգավիճակ շնորհեցին հենց Մուսա լեռան փեշերի հայերին, որն իր լուրջ ազդեցությունն է ունեցել Սվեդիայի ինքնապաշտպանվող հայերի ինքնանվանման և նույնիսկ լոկալ ինքնութեան նոր ընկալումների վրա: Վեպում արդեն ձևակերպված «մուսալեոցիները մենք ենք», և ուրեմն «մենք ենք այդ հերոսները» գիտակցութեան: Մուսալեռ-Սվեդիայի հայերի «մուսալեոցիացման» կարևոր ու գլխավոր ուղեւիշը դարձավ Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպը:

Ֆրանց Վերֆելի վեպը և դրա շուրջ բարձրացված ազնուկը միանգամից չէ, որ ազդել են «մուսալեոցի» եզրոյթի բնութագրի ազնվականացմանը: Դրա համար, ըստ երևոյթին, պիտի սերունդ փոխվեր: Հիրավի, «մուսալեոցիացման» համար էլ անհրաժեշտ եղավ որոշակի ժամանակահատված, սերնդափոխություն, որպեսզի առաջին սերնդի գլխավորապես տրավմատիկ հիշողություններից երկրորդ սերնդում առանձնանային, վերափոխվեին ու հասունանային լռեցված, գուցե նույնիսկ չզիտակցված հերոսականութեան և արժանապատվութեան թեման, և ինքնութեան նոր ազդակ հանդիսանային: «Մուսալեոցի» եզրոյթ-խմբանունը հանրայնանում է առավելապես 1960-70-ական թթ., երբ արդեն մուսալեոցիներն Այնճարում էին, և երբ Այնճար գյուղաքաղաքի մուսալեոցի բնակչութունը հարկադրված ինքնապաշտպանական ողբերգութունը սկսել էր ընկալել որպես արժանապատիվ դյուցազնամարտ և տոնակատարութեան ձևով ծիսականացրել փրկութեան/հաղթանակի օրվա հիշատակումը: Այս տոնահանդեսի միջոցով հարյուր տարի առաջ տեղի ունեցած դեպքերը նոր իմաստ են ստանում, զոհվածներին և նրանց մահվան ողբերգականութեան, զրկանքների թեման աստիճանաբար փոխարինվում է հաղթանակի և հերոսականութեան հպարտութեամբ: Տվյալ դեպքում հասարակական տրավման սկսում է վերափոխվել արժանապատիվ հաղթանակի բերկրանքով և հաղթանակի հետ կապված ազնվական, հերոս, արժանապատիվ «մուսալեոցի» ինքնընկալումով:

**ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐՆ ԱՐՏԱՑՈՒԿԱԾ ԵՆ
ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐՈՒՄ**

1. Խորեն Գրիգորյան, Կորույալ հուշարձաններ. Արամ Վրույրի հավաքածուի լուսանկարները և Հայոց ցեղասպանությունը, Ցեղասպանագիտական հանդես 3 (1-2), էջ 218-130 Երևան 2015
2. Խորեն Գրիգորյան, Ցեղասպանության հիշողությունը և սիրիահայերը. Վերադա՞րձ հայրենիք, Սուրիոյ Հայերը գիտաժողովի նիւթեր, Հայկազեան Համալսարան, էջ 539-547, Բեյրութ 2018
3. Խորեն Գրիգորյան, «Մուսալեոցի» խմբի անունման առաջացման և փոխակերպման հարցի շուրջ, Հայկազեան Հայագիտական Հանդես, էջ 619-631 Բեյրութ 2018
4. Խորեն Գրիգորյան, Մուսալեոցիները դարաբաղի՞ Նախնիների ինքնութեան փնտրտուքները՝ 1915ի ինքնապաշտպանական մարտերից յետոյ, Հայկազեան Հայագիտական Հանդես, էջ 763-774 Բեյրութ 2019
5. Խորեն Գրիգորյան, Ուլքե՞ր են ղեկավարել Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերը, Լրաբեր հասրակական գիտությունների հանդես 2, էջ 131-137, Երևան 2024
6. Խորեն Գրիգորյան «Ֆրանց Վերֆելի «Մուսա լեռան 40 օրը» վեպի առաջին արձագանքները հայկական իրականության մեջ», «Հայագիտակա հանդես», համար 2(65) էջ 189-203 Երևան 2024 :
7. Խորեն Գրիգորյան «Մուսալեոցիների կիլիկյան ծագման վարկածը՝մուսալեոցիները որպես կիլիկեցի» «Լրաբեր հասարակական գիտությունների» հանդեսի 2024 N 3-ում:

**Хорен Генрихович Григорян
Трансформации идентичности армянской общины
в ливанском поселении Анджар
Резюме**

Диссертация посвящена изучению следующих вопросов: влияние коллективной исторической памяти на формирование идентичности населения Анджара; последствия миграции и адаптации в новом социально-культурном контексте; роль политических и социальных лидеров в конструировании групповой идентичности; а также анализ эволюционных и конструктивистских процессов, связанных с развитием идентичности данной общины.

Цель исследования — на основе этнографического подхода выявить ключевые аспекты трансформации идентичности армянского населения деревни Анжар в Ливане.

Для достижения этой цели поставлены следующие задачи:

1. Исследование причин возникновения и трансформации обозначений групп «сведийцев» и «мусалерцев».

2. Анализ формирования нарративов, повествований и мифов о происхождении мусалерцев на основе сопоставления письменных и устных источников.

3. Изучение оборонительных боев на горе Муса-Даг, их историзации и мифологизации в контексте коллективной памяти.

4. Исследование процессов переселения мусалерцев в Анжар и анализа механизмов «мусалеризации» данной общины.

Диссертация состоит из трех глав, посвященных формированию, переосмыслению и историческому развитию идентичности жителей Муса-Дага в контексте Геноцида армян и последующих событий.

В первой главе исследуется процесс формирования идентичности мусадагцов, а также история возникновения этого самоназвания. Рассматривается, как и в каких обстоятельствах название «мусалерцы» стало основным элементом их идентичности, как начались поиски самоидентификации, и какую роль в этом сыграли Геноцид армян и роман Франца Верфеля «Сорок дней Муса-Дага», ставший символом этой идентичности.

Во второй главе проводится анализ событий самообороны на Муса-Даге в августе-сентябре 1915 года. Исследование основывается на сравнительном анализе трех версий: Армянской революционной федерации (АРФ), социал-демократической партии Гнчакян и Армянской евангельской церкви. Каждая из сторон по-своему интерпретировала события, часто превращая их в мифы, отражающие их политическую ориентацию. Глава раскрывает, как различные группы стремились мифологизировать героическую борьбу и включить её в свои нарративы.

Третья глава посвящена переселению большинства мусадагцов в 1939 году в Айнджар (Ливан) и превращению этой территории в «новый Муса-Даг». Здесь анализируется процесс «мусалеризации» Айнджара, переосмысление общинной идентичности в новом окружении и усилия, направленные на социальное и культурное восстановление общины.

Диссертация приходит к выводу, что опыт мусадагцов представляет собой уникальный пример формирования и трансформации внутритнической идентичности армянских общин после Геноцида. Идентичность мусадагцов формировалась не только под влиянием исторических событий, но и переосмысливалась в новом окружении, включив в себя элементы общей истории, героической борьбы и восстановления идентичности в новом месте.

Работа раскрывает тонкие связи между идентичностью, памятью и внутритническими преобразованиями на примере Муса-Дага.

Khoren Henrik Grigoryan
The Transformation of the Armenian Community's Identity
in the Settlement of Ainjar, Lebanon
Summary

The dissertation is dedicated to examining the following issues: the influence of collective historical memory on the formation of Anjar's population identity; the consequences of migration and adaptation in a new socio-cultural context; the role of political and social leaders in the construction of group identity; and an analysis of the evolutionary and constructivist processes related to the development of the community's identity.

The objective of the research is to identify the key aspects of the transformation of the Armenian population's identity in the village of Anjar, Lebanon, from an ethnographic perspective.

To achieve this goal, the following tasks are outlined:

1. Investigating the origins and transformations of the group designations "Swedians" and "Musa-Daghians."
2. Analyzing the formation of narratives, stories, and myths regarding the origins of the Musa-Daghians through the comparison of written and oral sources.
3. Studying the defensive battles on Mount Musa-Dagh, their historicization, and mythologization in the context of collective memory.
4. Investigating the processes of the resettlement of Musa-Daghians in Anjar and analyzing the mechanisms of the "Musa-Daghization" of this community.

The dissertation consists of three chapters, focusing on the formation, reinterpretation, and historical development of the identity of Musa Dagh's inhabitants in the context of the Armenian Genocide and subsequent events.

The first chapter examines the process of identity formation among the Musa Dagh community, as well as the history of their self-designation. It explores how and under what circumstances the term "Musa Daghians" became a central element of their identity, how the search for self-identity began, and the role played by the Armenian Genocide and Franz Werfel's novel "The Forty Days of Musa Dagh", which became a unique symbol of their identity.

The second chapter analyzes the self-defense battles of Musa Dagh in August–September 1915. The study is based on a comparative analysis of three different narratives: those of the Armenian Revolutionary Federation (ARF), the Social Democrat Hunchakian Party, and the Armenian Evangelical Church. Each group interpreted the events in its own way, often transforming them into myths aligned with their political orientations. This chapter highlights how these groups sought to mythologize the heroic resistance and integrate it into their respective narratives.

The third chapter focuses on the migration of the majority of Musa Dagh's population to Anjar (Lebanon) in 1939 and the transformation of this

area into a “new Musa Dagh.” The chapter analyzes the process of “Musa-Daghification” of Anjar, the redefinition of communal identity in a new environment, and the efforts directed toward the social and cultural reconstruction of the community.

The dissertation concludes that the experience of the Musa Dagh community serves as a unique example of the formation and transformation of intra-ethnic identity among Armenian communities after the Genocide. The identity of Musa Dagh’s people was shaped not only by historical events but also reinterpreted in a new setting, incorporating elements of shared history, heroic struggle, and the restoration of identity in a new location.

The study reveals the intricate connections between identity, memory, and intra-ethnic transformations using the case of Musa Dagh.

A handwritten signature in blue ink, appearing to be the name 'Sogh' or similar, written in a cursive style.